ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՆԻՍՏԻ

28.02.2025 թ.

Արմավիրի մարզ, Արաքս համայնք

2025 թվականի փետրվարի 28-ին Արաքսի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Արաքս համայնքի ղեկավրի՝ 2025 թվականի հունվարի 20-ի թիվ 55-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի նիստ՝ Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ա. Նավասարդյանը, Ռուզաննա Թեմուրյան-Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման և հաշվառման բաժնի պետ - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Լիլիթ Պողոսյան-Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ-հանձնաժողովի անդամ, Վանուշ Հայրապետյան-Ջրառատ բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ, Հասմիկ Հովսեփյան-Մեծամոր բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ, Արսեն Հովսեփյան-Ակնաշեն բնակավայրի վարչական ղեկավար - հանձնաժողովի անդամ, Արտավազդ Ֆրանգուլյան - «Արաքսի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն - հանձնաժողովի անդամ, Միսակ Միսակյան-Արաքս համայնքի ղեկավարի օգնական - հանձնաժողովի անդամ, Թեհմինե Անդրիասյան-Արաքսի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ - հանձնաժողովի քարտուղար, Հակոբջան Հովսեփյան-Գայ գյուղի բնակիչ, Մարիա Ազատյան-Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ-հանձնաժողովի քարտուղար:

Օրակարգ.

1.Արաքս համայնքում մասնակցային բյուջետավարման գործընթացի շրջանակներում չափորոշիչներին համապատասխանող առաջարկ-նախագծերի

քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին.

1. **Հանձնաժողովի նախագահ Արա Նավասարդյանին,**
ով արձանագրեց, որ մասնակցային բյուջետավարման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն առաջարկ-նախագծերի քվեարկությունը ավարտվել է.

2.Հանձնաժողովի քարտուղար Մարիա Ազատյանին, ով ներկայացրեց քվեարկության դրված ծրագրերի հավաքած միավորները՝ առավելագույն թվից նվազման կարգով.

1. Հակոբջան Հովսեփյան- Մեծամոր-Գայ գյուղերի ճանապարհի ասֆալտապատում- 3987 **ձայն /28892 բնակչություն՝ 22553 ընտրող-16+, 17,7%/**
2. Ներսես Ներսիսյան- Առատաշեն գյուղում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում- 3913 ձայն**/28892 բնակչություն՝ 22553 ընտրող-16+, 17,4%/**
3. Էդգար Ենոքյան- Լուսագյուղ գյուղում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում- 594 ձայն**/28892 բնակչություն՝ 22553 ընտրող-16+, 2,6%/**
4.Թագուհի Գրիգորյան- Գրիբոյեդով գյուղում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում- 53 ձայն**/28892 բնակչություն՝ 22553 ընտրող-16+, 0,24%/**
5. Հայկ Մանգասարյան- Արտիմետ գյուղում երիտասարդական կենտրոնի ստեղծում- 25 ձայն**/28892 բնակչություն՝ 22553 ընտրող-16+, 0,11%/**

Հանձնաժողովը որոշեց.

Առաջարկվել է Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանին՝ նիստի արձանագրության մասին տեղեկացնել ծրագրային առաջարկների հեղինակներին և հաղթող առաջարկ-նախագծի հիման վրա կազմել սուբվենցիոն հայտ և ներկայացնել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ համաձայն ՀՀ Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշմամբ հաստատված կարգի:

Հանձնաժողովի նախագահ Արա Նավասարդյան՝

Հանձնաժողովի քարտուղար Մարիա Ազատյան՝